

ՀԱԿՈԲ ԱՂԱԲԱՐ

# ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ



891.995  
Ա-43

ՊԵՏՀՐԱՍ



30 MAY 2011

891.99 U

Q-43 Կողմ. ՀԱԿՈԲ ԱՂԱԲԱՐ

ԱԴ.

# ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼԵԳԵՆԴՆԵՐ,  
ՀԵՔԻԱԹՆԵՐ ՑԵՎ ԽԱՂՆԵՐ)

Կտղմեց և խմբագրեց՝  
Ռ. Ա.ՂԱԲԱՐ

Նկարները Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻ

Հեղինակի նկարը Ա. Կոջոյանի


ՀՀԳՁ-105  
ՎԵՐԱ

ՊԵՏՀԱՆ  
ՀՀԿԳԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1938

- 5 FEB 2013


891.54-93 + 087.12

6387



ВО 246759

9573 КН



ЗОМІОВ О. І. О. СУРГ



8109-53

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հակոբ Աղաբարը մեր մանկական ականավոր գրողներից եւ Լինելով ուսուցիչ-մանկավարժ, նաև հոգատարությամբ գուրզուրել, սիրել եւ մանուկներին, ապրել եւ նըրանց պարզ ու վճիռ զգացմունքներով, դիտել և ուսումնասիրել եւ նրանց կյանքն ու հոգեբանությունը:

Այդ եւ պատճառը, վոր Հ. Աղաբարը կարողացել եւ այնքան վառ ու կենդանի, անկեղծ զգացմունքով հագեցված յերկեր տալ՝ սկսած որորոցի յերեխայի թոթովանքներից մինչև կենսուրախ պիտուրը, մինչև նոր կյանքի կառուցմանը լծված կոմյերիտականը:

Հ. Աղաբարն իր գողորիկ բանաստեղծությունները հյուսել եւ այնքան հարազատ ու բնական, վոր գյուղն իր տուն ու տեղով, իր կալ ու մարագով, իր հանդ ու դաշտով, իր կենցաղով պատկերանում եւ մեզ։ Դրա հետ միասին բանաստեղծը հաճախ նկարագրել եւ նաև նախախորհրդային գյուղացու դառն ու չարքաշ կյանքը։

Հ. Աղաբարն ընդդրկել եւ մանկական աշխարհի շատ հմայիչ կողմեր, տվել եւ մանկական անարատ թոթովանքների գեղարվեստական նկարագիրը։ ահա զա յեւ պատճառը, վոր նրա բանաստեղծությունները, խաղերն ու լեգենդները մեր մանուկներն ու պատանիները անգիր են արել, յերգել ու պարել են խնդագին։

Նախադպրոցական և տարրական դպրոցների յերգաբանները զարդարված են Աղաբարի բառերի վրա հորինած մեր լավագույն յերաժշտագետների բազմաթիվ յերգերով

БІБЛІОТЕКА  
Академії Наук  
УРСР



Ուշադրության արժանի յե նաև այն, վոր հայկական  
մանկական առաջին ոպերայի՝ «Հաղթված բազեյի» լիբ-

րետոռն նույնպես նրա գրչին ե պատկանում:

Աղաբարն իր մանկությունն ու պատանեկությունը  
անցկացնելով գեղեցիկ բնության ծոցում՝ Նազարի սարե-  
րում ու անտառներում, խորապես ճանաչել ե այդ աշ-  
խարհը և այն մանուկների համար մատչելի վերաբա-  
դրել իր գրվածքներում:

«Պախրախոսն» ու «Մայիսը» լեզենդները, «Թուխոր»  
հեքիաթը, «Ծափ բաղնիքը», «Մայիսյան ուղի» պոեմները  
և նրա բազմաթիվ այլ գրվածքները մեր մանկական գրա-  
կանության լավագույն յերկերի շարքին են պատկանում:

Հակոբ Աղաբարն, անշուշտ, մեր մանկական գրակա-  
նության մեջ բռնում ե իր պատվավոր տեղը: Նա քիչ  
դեռ չի խաղացել ինքնուրույն մանկական յերկեր սաեղ-  
ձելու գործում:

Խորհրդային յերկրի ջերմ արել տակ ասլրող մանուկ-  
ները ծանոթանալով ներկա գրքի հետ, իրենց ընթերցա-  
նության, արտասանության և կենսուրախ խաղերի համար  
արժեքավոր նյութ կգտնեն այնտեղ:

## ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ


ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ



### ԻՄ ԲԱԼԻԿԸ

Հեղին մատաղ իմ բալիկի՝  
Ծիծեռնակ ե ծլվլան,  
Ուշ ու միտքը խաղալիքի՝  
Թիթեռնիկ ե թրվոան...  
Յերգ ու տաղը շրթունքներին  
Հա կվազի, կխնդա,  
Կամ կնստի ու գրքերն իր  
Իբրև թե հա կկարդա:  
Ծաղկի նման միշտ նախշունիկ,  
Ուրախ, զվարթ, ծիծաղկոտ,  
Ո՞վ կա եսպես Հոկտեմբերիկ՝  
Համ խիզախ, համ կրակոտ:

1926 թ.



## ԴԿՏԵՄԲԵՐԻԿԻՆ

Արշալույսի լուսաշաղախ

Շողն ես դու,

Վոր գալիս ե ու աչքերս  
Բաց անում.

Առավոտվա բյուրեղացած  
Ցողն ես դու,

Վոր գալիս ե ու յերեսս  
Թաց անում...

Են շընշընկան հով ու կովի  
Հեքն ես դու,

Վոր գալիս ե ու յերեսիս  
Զարնվում.

Են ճըճկան թոշունների  
Թևն ես դու,

Վոր ենքան ել հեշտությամբ չկ  
Բռնվում...

1926 թ.



## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՁՈՒ

Զան իմ, ջան իմ Հոկտեմբրանուշ  
Յեվ իմ անգին Հոկտեմբերիկ,  
Եղպես ուրախ, եղպես աշխույժ,  
Ուր կվազեք, ինչ կըերեք...

Ասես թոշուն՝

Անվերջ շրջուն,

Ասես թիթեռ

Զույգ թեփ տեր,

Թոշկոտում եք, զվարճանում,

Յեվ ձեր խաղը չի վերջանում:

Կյանք եք առել կարմիր որով,

Վայելում եք գութ ու գորով,


Յերնեկ ձեզ վոր՝ ձեզ հոգում ե  
Հոկտեմբերյան ույժ ու կորով:

Այդ հաղթական

Ույժն ու կորով  
Փոխարկել ե  
Հինը նորով.—

Փոխարկել ե, ու ձեզ համար  
Կառուցել ե մի նոր աշխարհ:  
Զան, իմ պստիկ Հոկտեմբերիկ,  
Յեվ իմ քնքուշ Հոկտեմբրանուշ,  
Ձեզ համար ե այս Մեծ Տոնը,  
Ձեզ ե գրվում և այս ձոնը...

1924 թ.



### ՀՆՉՈՒՄ Ե ԶԱՆԴԸ

Հնչում ե արդեն զանգը դպրոցի,  
Աշխատանքային մեր նոր դպրոցի,  
Խմբվում են այնտեղ աղջիկ ու տղա՝  
Վորպես մեղուներ զարնան ծաղկոցի:

Դպրոցի վրա արև ե ծագել  
Կարմիր շողերը փունջ-փունջ ներս ածել,  
Աղջիկ ու տղա կարմիր են հագել,  
Գարնան հոտավետ մի-մի վարդ դարձել:

Հնչում ե զանգը, մեղմիվ դողանջում,  
Ամենին դեպի նոր դպրոց կանչում,  
Բոլորն ել ուրախ, գնում են սիրով  
Մեր սիրտը լցնում կարմիր հույսերով:

Հնչում ե զանգը մեր նոր դպրոցի—  
Նոր-կյանքի ուսման աշխատանոցի—  
Դե հապա առաջ, բախտավոր ե նա,  
Ով այս դպրոցում մի տեղ ունենա:

1921 թ.

ԾՈՎԻ ԹԵՍ...

Մեր նոր այգին կյանք ե առել,  
Գարնան շնչով արթնացել—  
Շուրջը կարմիր զարդ ե դառել  
Վրան շող ու շաղ ածել:

Ծիլ ու ծաղիկ, վարդի կոկոն,  
Բաց են յեղել իրար մոտ,  
Կարմիր այգու թարմ յերեկոն  
Բուրում ե մեզ անուշ հոտ:

Ու ծաղկի պես, վարդի նման  
Կյանքը իրենց գիրկը լի,  
Կինն ու աղջիկ, ջահել տղան  
Ժպտում են միշտ կենսալի:

Ազատ կյանքը հազար սազով  
Խաղս ե ընկել ծովի պես,  
Զիք չքացան չարիք ու սով,  
Բախտավորուն ես կապել:



ԻՄ ԾԱԼԻԿՆԵՐԸ

Իմ ծաղիկները կարմիր են,  
Կարմիր, լալազար.

Բուրում են կարմիր մայիսի  
Վարդին հավասար:

Նրանք ծնվել են արևի  
Բոսոր շողերով,  
Նրանք սնվել են վաղորդյան  
Պաղպաղ ցողերով:

Մեկը մեր կյանքի աղբյուրն ե  
Անսպառ, անվերջ,  
Մյուսը նոր-կյանքի զառ-հուրն ե  
Մշտավառ, անշեջ:

Են կյանք—աղբյուրը  
Իր կաթն ե խմցրել նրանց:  
Են վառ զառ-հուրը  
Իր գարդն ե կպցրել նրանց:

Հ  
Յ  
Շ  
8

Իմ ծաղիկները խնամում եմ,  
Վոր սպակ հյուսեմ,  
Զարդարեմ քաջ հերոսի  
Ճակատը վսեմ,—


Ում կամքն ե խիզախ  
Ու խոսքը անվախ, անվեհեր,  
Ում գործն ե հզոր,  
Ու անունը հավերժ անմեռ:

Իմ ծաղիկները խնամում եմ  
Հենց նրա համար,  
Վոր կապեմ շքեղ մայիսյան  
Հաղթական կամար:

Զարդարեմ ուղին  
Հզոր գալիքի,  
Ուր չենք հանդիպի մենք  
Ցավ ու կարիքի:

1926 թ.





ՇՈՒՇԱՆՆԵՐ

Շուշաններս այս առավոտ շուտ արթնացան,  
Առավոտվա կարմիր լուսով զվարթացան,  
Շատի կը ծքին են վաղորդյան ցողն եր սառեր,  
Լալ ու ալմաստ, կարմիր մարջան ուլունք  
շարեր—

Շատի վզով արշալույսի ցողն եր փարել  
Ալ ու ալվան, ապարանջան-փողկապ դառել:

Շուշաններս եսպես պճնված, եսպես շքեղ,  
Կանգնել եյին ծաղկանոցիս մարդի մեջտեղ,  
Գլխիկները բռնել եյին դեպի վերև.

Ու լուռ ձայնով յերգում եյին կարմիր արե.—  
Նրանց մարդը թեև փոքր եր, բայց և ծաղկոտ  
Նրանց յերգը թեև անձայն, բայց  
ծիծաղկոտ:

Շուշաններիս վեր նայվածքում կյանք եր  
ցոլում,

Անթիվ, անվերջ նոր շուշաններ շուրջ  
ծըլում,—  
Շուշաններիս կարմիր յերգում կյանք եր  
բուրում,  
Ծիլ ու ծաղիկ կարմիր կյանքով  
հրապուրում...

1926 թ.

ՊԱՊԱՐ


Պապար, պապար, սիրուն ջան,  
Զենիդ մատաղ, կըչ-կըչան,  
Պապար արա, զորանաս,  
Լացն ու կոծը մոռանաս:

Յերկու թխլիկ թաթերով  
Ծածափ արա, համ պապար,  
Ես քու թըմփլիկ տոտերով  
Համ թըրվըրա, համ ծածառ:

Պապար արա, զորանաս,  
Լացն ու կոծը մոռանաս,  
Ուրախ որով մեծանաս,  
Կարմիր արև ունենաս:

Պապար, պապար, այ բալա,  
Պապար արա, բըլըլըլա,  
Տված կաթս քեզ հալար,  
Ջան, իմ ազիզ դու լալա:

1911 թ.



ԾԻՏԻԿՆ ՈՒ ՍՈՒՐԻԿԸ

Սուրիկ.—

Պստիկ-մստիկ, այ ծիտիկ,  
Քանի թռչես ծառից-ծառ,  
Գոնե մի տեղ քիչ տիտիկ,  
Հոգնած թերիդ հանդիստ առ:

Ծիտիկ.—

Ճը՝ զզ-վը՝ ստ, ճը՝ զզ-վը՝ ստ, ճի վ-ճի վ-ճի վ,  
Յես հոգնելու սովոր չեմ,  
Կուղեմ լինել մեծ արծիվ,  
Վոր ավելի շատ թռչեմ:

Սուրիկ.—

Կորի, պստիկ մեծամիտ,  
Արծիվ լինել ցանկացար,  
Վոր անպաշտպան ընկերիդ՝  
Իսկույն անես կըտցահար:

Ել չերգեց են ծիտիկը,  
Թւին տվավ ու թուավ,  
Իսկ մեր խելոք Սուրիկը  
Ծիտիկին ձեռք չտվավ:



### ՈՒԼԻԿ


Չալ ու չալտիկ մի ուլիկ,  
Համ պստիկ ես, համ չստիկ,  
Պոզեր ունես ալուլիկ՝  
Համ զեղեցիկ, համ կարճիկ:

Ականջներդ խըլըշկան,  
Աչիկներդ պսպըղան,  
Մըկ-մըկոցըդ կըմ-կըման՝  
Մորդ լեզվին ե նման:

Բոժոժներով զարդարուն  
Վըզնոց կառնեմ քեզ համար,  
Յերբ վազվզես դաշտերում՝  
Կըզընդ-զընդա անդադար:

Զալ ու չալտիկ իմ ուլի՛կ,  
Անգին ընկեր, սիրունիկ,  
Արի գնանք մեր պարտեղ,  
Մինչև մերդ հասնի քեզ:

1910 թ.



## ԿԱՏՈՒ

Յես կատու յեմ խիստ մլավան,  
—Մեավ, մեավ, մեավ...  
Նազ ու տուզով, ինքնահավան,  
—Պահ, պահ, պահ...  
Հեռու-մոտիկ ցատկել գիտեմ՝  
—Հոպ, հոպ, հոպ...  
Սուտիկ- մուտիկ սատկել գիտեմ՝  
—Վայ, վայ, վայ...  
Զար մկներին խաբել գիտեմ՝  
—Ո՞հ, ոհ, ոհ...  
Յերբ ճանկս ընկնեն՝ լափել գիտեմ,  
—Ի՞ֆ, ի՞ֆ, ի՞ֆ...  
Ել ծտի ճուտ ու հավի ճագ,  
Ել թազա ձուկ, յուղ ու կարագ,  
Ել պանիր-հաց, մսի կտոր  
Զեմ հարցնում՝ միշտ, ամեն որ՝  
Գողանում եմ ու հայդե, պուկ,  
Կտրի ծերին ուտում ծածուկ:


Մեկ ել հենց յես են կատուն եմ,  
Վոր յերբ հանկարծ նկատում եմ՝  
Թե ինձ տեսավ մի չար պառավ  
Ու մահակը իր ձեռքն առավ,  
Իսկույն ենպես

Ծըլկում յեմ ես,

Փախչում-գնում

Մի քունջ մտնում,

Վոր սատանան՝ թեկուզ սատկի,  
Ինձ գըտնել չի համարձակի:



ԻՄ ՓԻՍԻԿԸ


Փիսիկ ջան, դու մուկ կուտես,  
Ախորժակըդ ինչպես ե,  
Չընի շունը գզեց քեզ,  
Ենդուր քեֆդ ել փիս ե.  
— Միան՝, միան...

Վայ-վայ, ափսոս իմ կատու,  
Զենդ ել ե կըտըվել,  
Եդ ինչ որի ընկար դու,  
Շունը բուկըդ ե բոնել.  
— Միան՝, միան...

— Վոչ թե շունը, բարեկամ,  
Մոտ մի շաբաթ ե անցել  
Սոված փորով ընկած կամ  
Ու մկան համ չեմ տեսել.  
Միան՝, միան...

ՊՈՏԻԿ ՏՂԱՆ

Կարմիր բալը կանաչ ծառից  
Կախ եր ընկել դեպի ցած,  
Պստիկ տղան կողքի քարից  
Կուռն եր մեկնել հիացած:  
Յես են կարմիր բան եմ ուզում,  
Այ, են բալը վարդագույն,—  
Ծառս եր լինում, հետն ել խոսում,  
— Տես, կքաղեմ յես իսկույն:  
Ու մինչ տղան կուռը մեկնած՝  
Բալ եր ուզում, վոր քաղի,  
Մի սիրուն ծիտ՝ ճյուղին նստած՝  
Տեր եր դարձել վողջ ծառի:  
Մեկ մի անուշ բալ եր կտցում,  
Մեկ ցատկոտում ճյուղից-ճյուղ,  
Մեկ ծլվլում, տեղից շրջում,  
Տաղ եր ասում աներկուղ:  
Կարմիր բալը կանաչ ծառից  
Հա ժպտում եր տղային,  
Պստիկ տղան կողքի քարից  
Հա նայում եր բալերին:



# ԺԱՄՑՈՎՅ


Թիկ-թակ,	Հենց վոր անցնես
Թիկ-թակ,	Մի նոր ժամ՝
Ճոճանակ,	Ամուր-ամուր
Գնա, արի	Մուրճիդ տուր,
Շարունակ,	— Զը՛ը՛ ը՛նգ...
Շարունակ...	— Հոպ-պոպ...
Գնա, արի	— Զը՛ը՛ ը՛նգ...
Անդադար,	— Հոպ-պոպ...
Ամեն րոպէ	Թիկ-թակ,
Ամեն ժամ	Ճոճանակ,
Սլաքներդ	Թիկ-թակ,
Առաջ տար:	Շարունակ...



Զ Ն Ծ Ա Ղ Ի Կ

Սառը ձյունի  
Սառը գրկում  
Մի ծաղիկ ե  
Ծլում-ծաղկում:  
Թերը քնքուշ,  
Թերը սիպտակ,  
Աշիկները  
Բաց կապուտակ:

Չյուն ու ծաղիկ...  
Այ քեզ զարմանք,  
Չյուն ու ծաղիկ  
Ունեն մի կյանք:  
Դա ձմեռվան  
Մի ծաղիկ ե,  
Չյունից ծնված  
Չնծաղիկ ե:



Զ Ա Ն Ա Յ Յ Լ Ո Ւ Ս Ի Ն


Լուսինն ելավ են սարից,  
Սարի բարձր կատարից,  
Շեկվիկ-մեկվիկ յերեսով՝  
Փռեց գետնին լուսի ծով.—  
— Զան, այ լուսին,  
Զան քո լուսին,  
Զան քո կըլոր  
Շեկ յերեսին...

Խավարն իսկույն չքացավ,  
Ու ել գետնին չըկացավ,  
Լուսնի լուսից հալածված՝  
Խոր ձորերի մեջ մնաց.  
— Զան, այ լուսին,  
Շեկվիկ լուսին,  
Զան քո արծաթ  
Կամար ուսին...

Բայց ամպերը մոլեգին՝  
Նախանձեցին լուսնեղին,  
Յելան յերկինք կապուտակ՝  
Լուսնին առան իրենց տակ.

Զան, այ լուսին  
Խավար լուսին,  
Զան, կըսպասենք  
Մենք քո լուսին...

1911 թ.



### ՅԵՐԳ ԴԱՐՆԱՆ

Սիրուն գարնւն, դե շուտ արի,  
Քեզ ենք սպասում մի տարի,  
Զյուն-ձմեռվա ես ցրտերը՝  
Մաշեցին մեր սրտերը:  
Արդեն վաղուց քեզ են կարոտ  
Դաշտը, այգին ու արոտ,  
Անտառները և սար ու ձոր  
Քեզ են սպասում որեցոր։  
Յերբոր դու գաս, հետդ բերես  
Կարմիր արև ժըստերես,  
Առատ անձրև ինչքան կարաս՝  
Մեր ցանքսերին շատ կըտաս։  
Արի գարուն, դեհ շուտ արի,  
Արի լիքը ու բարի,  
Զյուն-ձմեռվա ես ցրտերը՝  
Հալեցին մեր սրտերը։

1910 թ.

80916759

33

Զ Բ Վ Ե Ժ



Քըշքըշալով սարի  
 լանջից  
 Յած ե իջնում  
 Գետը բարակ,  
 Յած ե իջնում, ձորի  
 միջից  
 Դուրս ե փախչում  
 Արագ-արագ:  
 Դուրս ե փախչում  
 ձորի միջից...  
 Առաջ վազում  
 Վոլոր-մոլոր,—  
 Են ահավոր ձոր ու  
 կիրճից  
 Գալիս հասնում  
 Անդնդին խոր..

Եղ անդունդից մի վիթխարի,  
 Լեռ ապառաժ մի մեծ քարի  
 Գլխից հանկարծ ընկնում ե ցած,  
 Ընկնում ե ցած՝

Գահավիժվում...  
 Ջուրը վիժվում,  
 Ջուրը գժվում,  
 Գոռում, գոչում  
 Ու հառաջում,—  
 — Ջըրրր — վեշա,  
 Ջը ըրը — վեշա...  
 — Ջը ըրը — վեշա,  
 Ջը ըր — վեժժ...

\* \*  
Մանուկն ասավ.—

—Գիտեմ, գիտեմ,

Շատ լավ գիտեմ,

Գարունն յեկավ ծաղկաբեր.

Գարնան գալուն

Ամեն թռչուն

Բսպասում ե անհամբեր...

Թռչնակն ասավ.—

Գարունն յեկավ,

Կանաչ հագան

Հանդ ու արոտ, ծառ ու ձյուղ.

Այսուհետև

Թռչենք թեթև,

Ճախրենք խմբով աներկյուղ...

Ծաղիկն ասավ.—

Գարունն յեկավ,

Խմբով յեկան՝

Մանուկները կենսուրախ.

Ծաղկափթիթ

Դաշտի միջին

Միշտ կհնչի յերդ ու տաղ...

ԱՄՐԱՆ ՈՐԵՐԻՆ

Ամառը յեկավ

Նուրբ թավիշ հազած,

Հանդ, արտ ու արոտ,

Վոսկի ու զմրուխտ:

Յողուն ե տվել

Յորենը արտում,

Յողուն ե տվել

Ու հասկ ե բոնել.

Յելել ե քամին

Ու մենամարտում,

Հասկը արժատով

Ուզում ե հանել.

Հասկերը խմբով

Քամուց չեն վախում,

Գնում են գալիս

Մեջք մեջքի տված

Ու շարքով ամուր

Իրար ուժ տալիս,

Խշշում անուշ  
 Ու յերգ են ասում.  
 Կարծես թե ծով ե  
 Յելել ե հոսում,  
 Մեր բերքի ծովս ե  
 Ծափում ու ծփում:  
 Լեզու յեն կտրել  
 Սար ու ձոր ենտեղ,  
 Լեզու յեն կտրել  
 Պատասխան տալի.  
 Կանչողի ձայնից  
 Ավելի ուժեղ՝  
 Են պատասխանն ե  
 Դեպի մեզ գալի:  
 Արձագանքում են  
 Հանդ ու անդաստան,  
 Իսկույն յետ տալիս  
 Խոսքիդ պատասխան:  
 Այ քեզ հրաշալիք.  
 Այդ պատասխանում  
 Դարձյալ լսում ես  
 Մի ծանոթ անուն:  
 Պիոներներն են—  
 Ճամբար են յեկել,

Ու սարի դոշին  
 Վրաններ խփել:  
 Այժմ զիլ յերգում,  
 Խաղում են, կանչում  
 Նուրբ թավիշ հագած  
 Բնության գրկում:

1923 թ.


ԾԻՐԱՆԻ ՇԵՐԵՓԸ

Մեր տանը մի շերեփ կար,  
Մինչև միսը յեփ կգար,  
Տաք պղնձին յեղած թառ,  
Մեկին չեր տա մի պատառ:  
— Այս մեր շերեփ ծիրանի,  
Աջ ձեռքն եյիր մեր նանի...

Բերանը լայն ու կոկիկ,  
Փայ եր տալիս գոքը լիք,  
Կոթը կեռտիկ ու յերկար,  
Բանեցնելու շատ հարմար:  
— Այս մեր շերեփ ծիրանի,  
Առանց քեզ նանն ի՞նչ անի:

Եսոր, քանդվի ես որը,  
Զեռքից գնաց բոլորը,—  
Տաք ջրի ել կարոտ ենք,  
Վոր աղ անենք և ուտենք:—  
— Այս մեր շերեփ ծիրանի,  
Քեզնով նանը ի՞նչ անի...

ԼԵԳԵՆԴՆԵՐ



ՊԱԽՐԱԽՈՏ  
Լեզենդ

1.

Հին ժամանակ,  
Թե սուտ, թե՝ զորթ,—  
Ապրում եր մի հայտնի վորսորդ.  
Ինքը ուժեղ,  
Գնդակն անշեղ...  
Շներ  
Ուներ  
Բարակ-բարակ,—  
Առկուլ,

Հասկուր,  
Պեծ-պեծ կրակ:

Մի որ առավ  
Հրացան գնդակ,  
Անտառ մտավ  
Շատ համարձակ:

Շներն ընկան թփուտ-բացատ,  
Ու շրջեցին իրարից զատ  
Վոր վորս գտնեն՝  
Տերից հանեն,  
Քշեն՝ տիրոջ  
Առաջն անեն:  
Իսկ վորսորդը դարան մտած,  
Ու շի-ուշով աչքը չուած,  
Բսպասում եր յերբ վորսը դա՝  
Իր մահացու գնդակով տա:

2.

Մեկ ել հանկարծ լսեց մի ձայն,—  
Նա ձանաչեց, վոր շունն ե այն,—  
Վազեց առաջ, վոր իմանա՝  
Ինչու ենպես հաջում ե նա...


Հեռվից դիտեց  
Ու նկատեց,

Վոր Առկուլը խիստ կատաղած,  
Մի պախրակով առաջն արած,  
Հա թոշում ե,  
Հա հաջում ե,  
Պախրակովն ել մռնչում ե...  
Ու զարմացավ թե՝ ախր են  
Արագավազ վայրի պախրեն,  
Ի՞նչ ե կանգնել ու բառաշում,  
Ախր ինչու նա չի փախչում...

3.

Հասկուլ շունը յեկավ-հասավ,  
Հենց՝ վոր պախրին կանգնած տեսավ  
Վրա ընկավ, ուզեց բռնել,  
Բայց թե շանը՝ պախրեն մին ել,  
Վոր չտվեց պոզով հարու,  
Շանը առավ՝ գցեց հեռու,  
Հասկուլն ընկավ սարից ներքեւ,  
Փշրեց գլուխ, թրկունք ու թև:

Վորսորդն իսկույն նշան բռնեց,  
Հրացանից նա արձակեց,  
Խփեց-փշրեց պախրի պոզը,  
Պախրեն ասա թեքեց վիզը...  
Յերկրորդ անգամ նա արձակեց,  
Տվեց պախրի կուրծքը ծակեց,



Ընկավ պախրեն մռնչալով,  
Մրտի խորքից հառաշելով,—  
Տեղն ու տեղը մնաց ընկած՝  
Աչքերն անլուս վերև տնկած...

Վորսորդն ուրախ վազեց-գնաց,  
Տեսավ պախրին՝ ապշած մնաց.—  
Պախրան ընկած արյան միջին  
Փշում եր իր շունչը վերջին:  
Մի նորածին  
Հորթուկ ծծին՝  
Կաթն եր ուտում  
Ու հոտոտում...  
Կաթն եր ուտում արնաշաղախ,

Կուրծքը ծծում արնաթաթախ:

Վորսորդն ասավ.—

Ա՛խ-վախ, ախ-վախ, ես ինչ տեսա,  
Այ թե ինչու չեր փախչում սա...  
Մայր ե յեղել ծծկեր հորթի,  
Պատահել ե շուն ու մարդի...

Ասավ-չասավ ես վորսորդը,  
Վազեց բռնի պախրի հորթը...

Հորթը փախավ ծառի տակից  
Ու ազատվեց նրա ձեռքից:

Բայց վորսորդը վազքի թափից  
Ներքե ընկավ լեռ քարափից.

Սա ել գնաց իր շան մոտը,  
Զարդեց, փշրեց ձեռն ու վոտը:

Առկուլ շունը մենակ մնաց,  
Անտառն ընկավ, կորավ, գնաց:

Հորթը մնաց անծիծ, անկաթ.


Չար վորսորդից ում տար գանգատ,

Բա ինչ աներ,

Ինչով ապրեր,

Մնացել եր

Անհեր, անմեր...



Ու վոտի տակ տված անտառ  
Բառաչում եր լեղապատառ,  
Բառաչում եր,  
Հառաչում եր,  
Յերեխի պես լալիս-լալիս,  
Մոք գլխովը պտույտ գալիս...

Ես հորթիկին,  
Խեղճ վորբուկին  
Վորդեզրեց վայրի մերին  
Ու մայր դառավ ես անմերին.  
Կաթի տեղակ խոտ բուսցրեց,  
Պախրահորթին ուտեցրեց.

Խոտը մետաքս, խոտը քնիքուշ,  
Պախրահորթը կերավ մուշ-մուշ,  
Ենքան կերավ անուշ խոտը,  
Վոր մեծացավ պախրահորթը...  
Են որվանից անտառներում  
Բուսնում ե մի կանաչ խոտ,  
Պախրաները շատ են սիրում,  
Նա կոչվում ե Պախրախոտ:

1926 թ.

Ս Ա Յ Ի Ս

Լեզենդ

— Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Գյուլ-գյուլ, գյուլիստան,  
Գյուլը քաղեն, թռղ ինձ տան,  
Կառնեմ, կանեմ կրծքիս զարդ  
Ու կանվանեմ կարմիր վարդ:

Կարմիր վարդը մայիսին  
Անուշ բալիս կըսազի,  
Նա ինքն ե մի նոր մայիս,  
Միրտը կարմիր ատլասի:

I

Մի պառավ նան  
Նորեկ գարնան  
Ասավ իրան  
Պստիկ թոռան.

— Մարտո, Մարտո, եհեյ Մարտին,  
Այ ինչ ասեմ քեզ պես մարդին,—  
Տես ինչպես ե խոտը աճեր,  
Դաշտն ու ձորը կանաչեր,

Իսկ դու տանը պինդ նստած,  
Ծեծում ես մեր յերեխանց:  
Ճիպոտդ մու, մի վախի,  
Դուռը բաց մեր փարախի,—  
Գնաց-կորավ ձմեռը...  
Մեր գառներն ու ուլերը  
Սոված մեռան անոթի,  
Քշիր դաշտը արոտի...

II

Մարտինն ասավ՝ թե շատ լավ,  
Խաղը թողեց ու յելավ,  
Զեռքն առավ մեծ չոմբախը,  
Գնաց-բացեց փարախը.—  
Բացեց—կանչեց.—  
— Կռոռ.. ոհե, հե...  
Գառը քշեց.  
— Դե, հա դե...  
— Հացիկ,  
Պեծիկ,  
Քուշ, հա քուշ...  
— Պստիկ

Եծիկ,  
Տես, ըզզուշ...  
— Ամլիկ  
Գառնիկ,

Բի՛ժ—բի՛ժ—բի՛ժ...

—Ուլիկ,

Բուլիկ,

Գի՛ժ ես, գի՛ժ...

Ու եսպես,

Մոսնի պես

Քշեց տարավ

Կեսորին՝

Արոտն արավ

Բոլորին...

### III

Ազմտ, արձակ ու մեծ դաշտ,  
Գառն ու ուլն ել միշտ անհաշտ.—  
Թռան-իջան՝

Ծուլ, հայ ծուլ,

Ու շաղ անցան

Գառն ու ուլ...

Սա դես գնաց,

Նա դեն գնաց,

Մենակ մնաց

Խեղճ գառնարած:

Ու գառնարած խեղճ Մարտին

Զոռ տվեց իր մեծ փայտին,

Դես-դեն ընկավ վազեվազ,

Իրար գցեց հազիվ-հազ.

Ու պտտեց անդադար,

Վոր չկորչեն ուլ ու գառ:

### IV

Ոխայ, ոխայ, ինչ լավ եր,

Գարնան կանչ ու հրավեր,—

Հյուր են յեկել ծիլ ու խոտ,

Գառն ու ուլն ել նրանց մոտ...

Յեկել ե և վառ արև...

Ու տալիս ե ջերմ բարե,

—Բարե,

Շատ բարե

Մեր սար ու ձորին,

Յեվ շուրջ բոլորին...

—Բարե,

Շատ բարե

Բողբոջ ծիլերին,

Կարճ-պոչ ուլերին,

Ամլիկ գառնիկին,

Նանի թոռնիկին...

—Բարե,

Շատ բարե

Ծիտ ու ձնձղուկին,

Մըջուն-մժղուկին,

Մեղուն ես մւր ե,

Զորս կողմը լուռ ե,—

Ի՞նչ եւ ուշացել,  
Դեռ չի վեր կացել...  
— Յեվ բարե,  
Բարե  
Աղբյուր-առվակին,  
Բարակ վտակին,  
Արագ գետակին,  
Բարե բոլորին  
Գարնան ես որին...

## V

Մեկ ել հանկարծ ամպոտեց,  
Սմպը շողին գեն բոթեց,  
Արեվին սև քող պատեց.  
Ինքը չոքեց մեծ սարին՝  
Խավարն իջավ աշխարհին,—  
Չորս կողմը թունդ սևակնեց.  
Գոռաց, գոռաց, փայլակնեց...  
Վորտ, կայծակ,  
Շանթ ու կրակ,  
Տեղաց գունդ-գունդ  
Անգութ կարկուտ,  
Վերջն ել հեղեղ,  
Քամի ուժեղ...  
Ու ջուրն եկավ  
Չորս կողմից,

Քշեց տարավ  
Ամեն ինչ...  
Գառն ու ույն ել ցիրուցան՝  
Սար ու ձորով շաղ անցան...  
Խեղճ իմ, խեղճ իմ, խեղճ Մարտին,  
Վայ քու որին, քու դարդին,—  
Դու մի պստիկ գառնարած,  
Քարերի տակ տապ արած,  
Վոնց պահեյիր են որին  
Ուլերին ու գառներին:

## VI

Յերբ ամեն ինչ հանդարտեց,  
Մարտոն ասես նոր զարթեց,  
Վոչ ուլլ կար,  
Վոչ ել՝ գառ...  
Լաց ու կոծով,  
Ճիչ-գոռոցով  
Դես-դեն ընկավ,  
Դատարկ յեկավ.—  
Արցունքն աչքին դառնաղի՝  
Յեկավ-գնաց իրենց տուն,  
Պառազն յելավ կատաղի՝  
Մի լավ ծեծեց խեղճ Մարտուն:  
Ծեծեց,  
Ասեց.

—Այ անպիտան, փուչ կենդանի,  
Քեզ պես տղին գրողը տանի,  
Ի՞նչ ես յեկել քունջը մտել,  
Տան պուճախում ի՞նչ ես գտել:  
Ուր կորցրիր գառն ու ուլը,  
Դար ու դատարկ թողիր դուռս.  
Գնա շուտով ման յեկ դաշտեր,  
Գառն ու ուլս հավաքիր բեր,  
Ել ինձանում ենքան չկա,—  
Վեր կաց կորի, դատարկ չգաս:

### VII

Մարտինն ահեղ սարերն ընկավ,  
Դարերն ընկավ, ել յետ չեկավ...  
Մի որ տխուր-տրտում եր,  
Մի որ ուրախ ժպտում եր:  
—Մարտ, այ Մարտ,  
Են քամին ե փչում-կանչում:  
—Մարտո, այ Մարտ,  
Են ջրերն են, տես, կարկաչում:  
—Մարտո, այ Մարտ,  
Են ամպերն են գոռում, գոչում:  
—Մարտո, այ Մարտ,  
Են փայլակն ե փայլում-հանգչում:  
Մարտոն լալիս՝  
Են անձրևն ե շրփ-շրփ գալիս.

Մարտոն ժպտում՝  
Են արեն ե շող ե տալիս:  
Ու Մարտոյի անունով՝  
Եղ ամիսը կոչվեց Մարտ:

### VIII

Իրեն պստիկ յեղբոր սիրուն  
Միջնակ յեղբայրն յելավ իսկույն,  
Գնաց շրջի սարեր ու ձոր՝  
Գտնի-բերի իրեն յեղբոր:  
—Ապրես, ապրես,

Դու շատ ապրես,—

Սոսավ նանը սրտակեղ.  
—Գնա, գուցե գտնես-բերես

Մեր Մարտոյին սեերես:  
Ապրեսն եկավ ժպտուն,  
Արթուն,

Ապրիլ ամսվա պես կայտառ,  
Ապրեսն եկավ ծիծղուն,  
Յայտուն,

Կյանք եր բուրում անդադար:  
Սա ել յերկար ընկավ դես-դեն,  
Բայց չըգտավ Մարտոյին,  
Ինքն ել կորած յեղբոր դարդից  
Ել յետ չեկավ բնավին:  
Սյդ ամիսն ել Ապրիլ կոչվեց՝

Ապրես յեղբոր անունով,  
Յերսուն որը անցավ-շրջեց,  
Մարտի նման տաք ու հով:

IX

Յերկու յեղբոր քույր Մային,  
Աչքը գցած ճամփային,  
Հսպասում եր մեծ հույսով,  
Թե յերբ կրզան յերկուսով:  
Բայց՝ չեկան:—  
Յերբ չեկան՝  
Ինքն ել գնաց վինտոելու,  
Յեղբայրներին գտնելու...  
Քնքուշիկ,  
Մի աղջիկ...  
Յերգ ու տաղով  
Պար ու խաղով,  
Հազար ծաղկի հազար հոտով,  
Թավ ատլասի կանաչ խոտով  
Հենց վոր մտավ ասպարեզ՝  
Բացվեց շքեղ մի հանդես:—  
—Ուր են աղիկ յեղբայրներս,  
Հարցմունք արավ ամենքին:  
Հազար կողմից միասին,  
Զեն-ձուն տվին ու ասին.

—Մայի...  
—Մայի...  
—Մը... Մայիս՝ ո՛,  
Մենք գիտենք,  
Մենք կասենք,  
Մեզ մոտ յեկ,  
Մենք ասենք...  
—Մայի...  
—Մայի...  
—Մը... Մայիս՝,  
Կարմիր վարդը Մայիսի  
Հենց քեզ վրա կըսազի.  
Դու ինքդ մի նոր Մայիս՝  
Սիրտդ կարմիր ատլասի:

X

Ահա յերրորդ ես ամիսն ել՝  
Մայիս կոչվեց են որից,  
Մայնի նման ես ամիսն ել  
Գեղեցիկ եր բոլորից:—  
Նա վաղորդյան մարջան ցող եր,  
Վոր խմվում եր արևից,  
Միջորեյի արվան շող եր,  
Վոր փայլում եր վերեկից:  
Ինքը վրփուր կյանք եր առեւ,

Գարնան շնչով արթնացել,—  
Վողջ աշխարհին զարդ եր դառել՝  
Վրան շող ու շաղ ածել:

Ծիլ ու ծաղկի, վարդ ու կոկոն՝  
Հավաքել եր իրեն մոտ,  
Ցերեկն անուշ, զով յերեկոն՝  
Հա բուրում եր ծաղկի հոտ:  
Ու ծաղկի պես, վարդի նման  
Բուրմունքն իրեն գիրկը լի՛,  
Մի զեփյուռ եր յերեկոյան,  
Վոր շնչում եր կենսալի՛:

—Մայի...

—Մայի...

—Սը... Մայի...ս՝,

—Գյուլ ես, դու գյուլ-գյուլիստան,

Վարդագյուլ ես՝ բուրաստան,

Վարդագյուլը Մայիսն ե—

Մայնի անվան ամիսն ե:

—Մայի..

—Մայի...

—Սը... Մայի...ս՝...

1925 թ.



ԶԵՎ, ԶԵՎ ԾՏԵՐԸ  
Լեզենիդ

«Ազատ ծեր, ազատ արեր»  
Ժողովրդ. ասացված

I

Զյուն-ձմեռն եր...  
Սաստիկ ցուրտ եր,  
Սառնամանիք,—

Մարդ կը մեռներ՝  
Անտուն-անտեր,

Առանց տանիք:

Զյունը վորպես ձմբան վերմակ  
Տարածվել եր լույսից ձերմակ—

Գեղ ու ավան,

Անդ-անդաստան՝

Ծածկվել եյին

Վերմակի տակ:

Քամին հանկարծ ուժդին փչում՝  
Վերմակը քիչ յետ եր շրջում,

Անտանելի  
Բուք եր անում,  
Թռչունների  
Հոգին հանում:

II

Ա՛խ եղ քամին...  
Հենց եղ ժամին՝  
Պստիկ-մստիկ  
Յերկու ծիտիկ  
Նստել եյին  
Հաստ դոխազին...  
Նրանց կողքին՝  
Կաղնու ձյուղին  
Վեր եր յեկել  
Ագռավ ազին,—  
Ագռավ ազին,  
Քթոտ նազին:

III

Փոքրիկ Սերգին  
Բահը ձեռքին  
Զյուն եր քերում,  
Բակը մաքրում...  
Հենց վոր տեսավ  
Ծիտիկներին,

Եսպես ասավ  
Են խեղճերին.—  
—Ա՛յ իմ անտեր,  
Պստիկ ծտեր,  
Քամին զուռում՝  
Փոս ե փորում,

Վայ, վայ, վայ, վայ,  
Ի՞նչ եք յեկել  
Դոներն ընկել  
Դուք տուն չունեք,  
Դուք բուն չունեք,  
Ի՞նչ խելքով եք  
Եստեղ նստել  
Սառ-սառուց  
Ես բոյազին:  
Միթե յերբեք  
Զի խրատել  
Ամրակտուց  
Ագռավ ազին:

IV

Պիծիկ-միծիկ,  
Գունդ ու կծիկ  
Ծիտիկները  
Ծըվծըվացին,—  
—Ծնվ, ծնվ, ծնվ, ծնվ...

Այսինքն թե՝  
 — Սով, սով ե, սով...  
 Մեկ ել նորից  
 Յրտի դուից  
     Զըստչըստացին,—  
 — Չուրթ, չուրթ, չուրթ, չուրթ...  
 Այսինքն թե՝  
 — Յուրտ, յուրտ, յուրտ...  
 — Այս, այս,—ասավ Սերգին,  
     Ճիշտ եք ասում  
     Դուք յերկուսով,—  
 Յուրտ եռ ու սով...  
     Համ շատ ցուրտ ե,  
     Բանը բուրդ ե.  
     Համ շատ սով ե,  
     Քաղցի ծով ե...  
 Զուրն ել սառել՝  
 Քար ե դառել,  
     Գետ ու գետակ  
     Սառուցի տակ  
 Մնջել լոել...  
     Մեղք եք, ծտեր,  
     Ազնիվ սրտեր,  
     Յեկեք տանեմ  
     Վանդակն անեմ,

Կուտ տամ կերեք  
 Կշտացեք դուք,—  
 Չեր վանդակը  
 Տանը կախեմ  
 Մեջը թառեք՝  
 Տաքացեք դուք...  
 Միտքը վոսկե  
 Ասած խոսք ե՝  
 «Մի բաժակ ջուր՝  
 Ով ուզի տուր»:  
 Յես կասեմ.—  
     — Մի շղարթ հաց՝  
     Տուր սրտաբաց,—  
     Կասեմ կտամ  
     Ամեն անգամ:  
 Ասավ Սերգին ու իր սրտում  
 Անկեղծ ցավեց նրանց համար,  
 Նրանց համար, վոր են ցրտում  
 Դողում եյին անպատճպար...  
 Ա՛խ, խեղճ ծտեր,  
 Անտոն-անտեր...  
 Լսեց-լսեց  
     Ազոավ ազին,  
     Եսպես ասեց  
     Հենց եղ մասին,—

— Սերգի-մերգի,  
 Եղ ինչ խելքի  
 Տեր ես յեղեւ—  
 Այ քեզ լավ խելք,  
 Մերոնք միշտ ել  
 Մի փոքր կեր  
 Հա գտել են,  
 Հա կըդտնեն...

Մի բուռ կտի,  
 Մի կում ջրի  
 Հոգով ինչ ե,  
 Մի մեծ բան չե...

Հազար սովենք,  
 Հազար մրսենք  
 Մեր հարազատ  
 Ապրուստն ազատ  
 Չենք թողնի մենք,  
 Վոր տիրագին  
 Գերի գրվենք  
 Փակ վանդակին...

V


Ծիտիկները  
 Վոգի առան  
 Ագուալ ազի  
 Ես խոսքերից:

Թեկիկները  
 Բացին՝ թռան  
 Մեծ դոխազին  
 Նստած ծերից:  
 Թռան իջան  
 Կաղնու ծառին,  
 Ու կըչկըչան  
 Բողոք արին,—  
 — Զե՛, չե՛, չե՛, չե՛,  
 Այսինքն թե՛  
 — Զե՛, չե՛, չե՛, չե՛,  
 Զենք ուզում, չե՛...  
 Վանդակն ինչ ե...  
 Մեկ ել հանկարծ ծրվծըվացին,  
 Կարծես եսպես բան ասացին.  
 — Ազատ-ազատ ողն ենք սիրում  
 Լայն — ընդարձակ մեր դաշտերի,  
 Անուշ-անուշ հոտն ենք սիրում  
 Գարնան կարմիր ալ-վարդերի:  
 — Զե՛ ու չոռ ձեզ,—  
 Ասավ Մերգին,—  
 Զյուն դա ձեզ պես  
 Ծտի խելքին:  
 Մի տես, մի տես  
 Սև ագուալին,  
 Բայզուշի պես

Վհնց կը կուավի...  
 Տունը, միթե  
 Չոլից լավ չե...  
 Ասավ Սերգին  
 Ու իր ձեռքի  
     Զնագնդին  
     Հայդե, շը՝պը՝տ.,.  
 Հենց ազուավի  
 Ուղիղ քնթին...  
     Բայց լավ յեղավ,  
     Վոր չըկպավ...  
 Ազուավ ազին նստած ճյուղից  
 Թուավ կորավ Սերգոնց գյուղից:  
 Իսկ ծտերը՝  
 Յուրտ-ցրտերը  
     Հաշվի չառան,  
 Փըուփըուալով,  
 Թըուլըուալով,  
     Յելան-թուան,  
 Ազատության՝  
 Մեծ բնության  
     Գիրկը դառան:  
 Ու են որից  
 Մինչև որս ել՝  
     Զը մոռացան

Մարդու առջե  
 Կըրկնել շուտ-շուտ՝  
     Չե՛, չե՛, չե՛, չե՛:  
 Եյսինքն թե՛  
     Չե՛, չե՛, չե՛, չե՛...

ՀԵՔԻԱԹՆԵՐ



Թ Ո Ւ Խ Ս Ը

Յերկու խոսք  
Հնուց մնացած  
Մի խոսք կտ փորձած,  
Թէ՛—«Գեղը կանգնի՝  
Դերան կը կառի»:

Կար չկար՝ մի չար,  
Մի գող բազե կար,—  
Կտուցը համ թուր,  
Համ թրի պես ծուռ,  
Ճանկերը կեռ-կեռ,  
Ինքը արյունկեր:  
Ամեն որ հանկարծ,  
Վորս նկատելիս՝  
Թևերն արձակած  
Վրա յեր տալիս.  
Վրա յեր տալիս,  
Գնդակի նման  
Ներքև եր գալիս  
Ու ամեն անդամ

Վորս անում-տանում  
 Ու անուշ անում:  
 Յերբ վոր կշտանում,  
 Վեր եր բարձրանում  
 Ու ջինջ կամարում  
 Ազատ սավառնում:  
 Պառավ նանի թուխար իսկի  
 Հանգիստ չուներ նրանից.—  
 Զեր իմանում վնաց ազատվի  
 Զար թշնամու բերանից:  
 Ճուտերն անգամ չըդիտեյին՝  
 Թե վոր կողմը վազվզեն,  
 Վոր վերևից վրա չըտա  
 Են արյունկեր չար բազեն:  
 Հենց վոր նրանք գնում եյին  
 Աղբանոցը քըջուջի՝  
 Մայրը արթուն միշտ հսկում եր՝  
 Վոր վնչ մեկը չըկորչի...  
 Մեկ ել՝ ըհը... գնդակի պես  
 Յած եր ընկնում գող բազեն,  
 Մեկին ճանկում ու հայդե, պուկ...  
 — Ի՞նչ կուզեյին՝ թող ասեն:  
 Տանելուն պես՝ ով տեսնում եր՝  
 Զեն եր տալիս դես ու դեն.—  
 Թէ՝ ոգնեցեք, յեկավ-տարավ



Են արյունկեր չար բազեն:  
 Մի կողմից ել թուխսն եր ձչում,  
 Ծըղըրտում եր, կըչկըչում,  
 Գնում-գալիս, թեին տալիս,  
 Կըրըխկում եր ու կանչում.—  
 «Վայ, ոգնեցեք, ճուտս չկա,  
 Բազեն զարկեց իմ ճուտին,  
 Յես վնաց անեմ, վնաց պահպանեմ,  
 Վոր ճուտերս նա չուտի»:  
 Ամբողջ որը դադար չուներ,  
 Կըռկըռում եր, քըջքըջում,—  
 Զեն եր տալիս, ու խղճալի  
 Կըչկըչում եր ու ձչում:  
 Եսպես խեղճ թուխսը  
 Յերկար մտածեց,

Յերկան ոգնության  
 Զեն ու ձուն ածեց.—  
 Նանը վոչ նրան  
 Ոգնության հասավ,  
 Վոչ ել մի բերան  
 Քաղցր խոսք ասավ:  
     Ու ճարը կտրած  
     Նա մի առավոտ՝  
     Վեր կացավ գնաց  
     Քաջ աքլորի մոտ:  
     Գնաց ամեն բան  
     Համ պատմեց նրան,  
     Համ խնդրեց, վոր գա  
     Իրեն ոգնության:  
     Աքաղաղը լսեց  
     Ու պատասխանեց.  
     —«Ծուղ-րուղու...  
     Այ քիրացեղ թխամեր,  
     Յես քեզ հետ եմ, քեզ ընկեր,  
     Գնա, բաղին ել պատմի,  
     Թող նա ել գա մեզ ոգնի,  
     Վոր յերեքով միասին՝  
     Մի լավ ծեծենք բաղեյին»:  
     Ու թուխսը հասավ,  
     Բաղին ել ասավ.

—Այ Շորոր մոքիր,  
 Խնդրեմ ինձ ոգնիր,—  
 Դու ել մի մեր ես,  
 Չափերի տեր ես,  
 Բաղեն անիրավ  
 Ճուտերս տարավ:  
 Ոգնիր ինձ, խնդրեմ,  
 Գեթ մինն ազատեմ.  
 Են քաջ աքլորն ել  
 Խոստացավ ոգնել:  
 —«Ղա, ղա, ղա...  
 Լավ, լավ, լավ...  
 (Բաղն եսպես ասավ).  
 —Հավիկ-մարիկ ջան,  
 Քանի շատ լինենք՝  
 Շուտ կըհաղթենք մենք  
 Են չար բաղեյին,  
 Են գող բաղեյին...  
 Շուտ արա, գնա,  
 Սագին ել ասա»:  
     Ու թուխսը հասավ,  
     Սագին ել ասավ.  
     —Այ ճերմակ հոքիր  
     Խնդրեմ ինձ ոգնիր.  
     Դու ել մի մեր ես,

Զագերի տեղ ես,  
Բազեն անիրավ  
Ճուտելս տարավ:  
Ոգնիր ինձ, խնդրեմ,  
Գեթ մինն ազատեմ.

Սուլթան աքլորը, Շորոր մոքիրը մեղ  
հետ կըլինեն:

—«Ղու, ղու, ղու...  
Լավ, լավ, լավ,—  
(Սագն եսպես ասավ).  
—Հավիկ-մարիկ ջան,  
Քանի շատ լինենք՝  
Շուտ կըհաղթենք մենք  
Են չար բազեյին,  
Են գող բազեյին.  
Դե գնա, ասա  
Մեր հնդուհավին,  
Ասա, նա ել գա,  
Հասնի մեր կովին»:

Ու թուխոը հասավ  
Հնդուհավի մոտ,  
Նըրան ել ասավ  
Իր խոսքը վշտոտ.—

—Այ Հնդու խնամի,  
Խնդրեմ ինձ ոգնի.—  
Դու ել մի մեր ես,  
Զագերի տեղ ես,  
Բազեն անիրավ  
Ճուտելս տարավ.  
Ոգնիր ինձ, խնդրեմ,  
Գեթ մինն ազատեմ.

Են քաջ աքլորը, Շորոր մոքիրը, Ճերմակ  
հոքիրը մեղ հետ կըլինեն:  
—«Վախ, վախ, վախ,  
Լավ, լավ, լավ,—  
Հնդուհավս ասավ.  
—Հավիկ-մարիկ ջան,  
Քանի շատ լինենք՝  
Շուտ կըհաղթենք մենք  
Են չար բազեյին,  
Են գող բազեյին.  
Շուտ արա, գնա,  
Մեր շանն ել ասա»:  
Թուխոը հասավ,  
Շանն ել ասավ.  
—Վոսկի հարևան,  
Յեկ ինձ ոգնության,  
Դու ել մի մեր ես,

Զագերի տեր ես,  
Բազեն անիրավ  
Ճուտերս տարավ:  
Ոգնիր ինձ, խնդրեմ,  
Գեթ մինն ազատեմ.

Սուլթան աքլորը, Շորոր մոքիրը մեղ  
հետ կը լինեն:

—«Ղու, ղու, ղու...  
Լավ, լավ, լավ,—  
(Սագն եսպես ասավ).  
—Հավիկ-մարիկ ջան,  
Քանի շատ լինենք՝  
Շուտ կը հաղթենք մենք  
Են չար բազեյին,  
Են գող բազեյին.  
Դե գնա, ասա  
Մեր հնդուհավին,  
Ասա, նա ել գա,  
Հասնի մեր կովին»:

Ու թուխսը հասավ  
Հնդուհավի մոտ,  
Նըրան ել ասավ  
Իր խոսքը վշտոտ.—

—Այ հնդու խնամի,  
Խնդրեմ ինձ ոգնի.—  
Դու ել մի մեր ես,  
Զագերի տեր ես,  
Բազեն անիրավ  
Ճուտերս տարավ.  
Ոգնիր ինձ, խնդրեմ,  
Գեթ մինն ազատեմ.

Են քաջ աքլորը, Շորոր մոքիրը, Ճերմակ  
հոքիրը մեղ հետ կը լինեն:  
—«Վախ, վախ, վախ,  
Լավ, լավ, լավ,—  
Հնդուհավս ասավ.  
—Հավիկ-մարիկ ջան,  
Քանի շատ լինենք՝  
Շուտ կը հաղթենք մենք  
Են չար բազեյին,  
Են գող բազեյին.  
Շուտ արա, գնա,  
Մեր շանն ել ասա»:  
Թուխսը հասավ,  
Շանն ել ասավ.  
—Վոսկի հարևան,  
Յեկ ինձ ոգնության,  
Դու ել մի մեր ես,

Զաղերի տեր ես.  
Բազեն անիրավ  
ուժտերս տարավ.  
Ոգնիր ինձ, խնդրեմ,  
Գեթ մինն աղատեմ.

Սուլթան աքլորը, Շորոր մոքիրը, Ճերմակ  
հոքիրը ու Հնդու խնամին մեզ հետ կըլինեն  
—«Հաֆ, հաֆ, հափ...»

Լավ, լավ, լավ,—  
(Շունն եսպես ասավ).

—Հավիկ-մարիկ ջան,  
Քանի շատ լինենք,  
Շուտ կըհաղթենք մենք  
Են չար բազեյին,  
Են գող բազեյին.  
Շուտ արա գնա,  
Կատվին ել ասաօ:

Թռավ, հասավ  
Կատվին ասավ.  
—Մոռան փիսիկ ջան,  
Յեկ ինձ ոգնության.  
Դու ել մի մեր ես,  
Զաղերի տեր ես.  
Բազեն անիրավ  
Ճուտերս տարավ.

Ոգնիր ինձ, խնդրեմ,  
Գեթ մինն աղատեմ.

Սուլթան աքլորը, Շորոր մոքիրը, Ճերմակ  
հոքիրը, Հնդու խնամին ու մեկ ել մեր  
շունը՝ մեզ հետ կըլինեն:

—Միավ, միավ, միավ...  
Լավ, լավ, լավ,—


(Մոռանը ասավ).

—Հավիկ ջան, գնա,  
Միամիտմա.

Հենց վոր ձեն տաս դու՝  
Կըգամ ոգնելու:  
Կըգամ ոգնելու,  
Են չար բազեյից,  
Են գող բազեյից  
Գեզ աղատելու:

Մյուս որը հանկարծ  
Բազեն յերևաց.—  
Են բարձր սարից,  
Մթին անտառից,  
Մեկ սկին տալով  
Առաջ եր գալի,  
Մեկ թևին տալով  
Դեպի ցած գալի:  
Յեկավ, վոր բակից


Կրկին վորս անի,  
 Թխսամոր ձագից  
 Մի ձագ ել տանի,  
 Մի ձագ ել տանի  
 Ու անուշ անի:  
 Թուխսն ես անդամ քնած չեր.  
 Հենց բազեյին նկատեց,  
 Վոր դեպի ցած կը թռչեր,  
 Իսկույն նրա դեմ վազեց,—  
 Ճշաց, ծվաց, ծղրտաց.  
 —Ե՞լ դու, անխիղճ, անպիտան,  
 Գող, ավազակ, չար գազան,  
 Ի՞նչ ես ուզում ինձանից,  
 Ի՞նչ ես կպել մեր տանից.  
 Գնա, կորի, թե չե քեզ՝  
 Պատառ-պատառ կանեմ յետ—  
 Ճշաց թռխսը կատաղած,  
 Վըրա ընկավ բազեյին.  
 Ու հենց են եր՝ քիչ մնաց,  
 Վոր մեկ-մեկու զզեյին,—  
 Մեկ ել հանկարծ դուրս յեկան  
 Թխսամորը ոգնության:  
 Աքլորն յելավ թմբի ծերը  
 Ծըլըրտաց.—  
 —Կղո-կո-կո-կո...



Բաղը յեկավ թևահարեց,  
 Ճըղ-ճըղաց.—  
 —Ղա-ղա-ղա...  
 Մագը հասավ, վիզը մեկնեց,  
 Ճըչ-ճըչաց.—  
 —Չը՛ր-չը՛ր, չը՛ր-չը՛ր...  
 Հնդկահավը ուռուցվորվեց,  
 Բըլդ-բըլդաց.—  
 —Բըլը, բըլը... բըլը...  
 Մի կողմից ել շունը հաջեց  
 Կատաղած.—  
 Ուաֆ, ուաֆ, ուաֆ...  
 Շան յետեվից կատուն մլավեց  
 Բարկացած.—  
 Միան... միան-միան...  
 Ել բակումը թխսամորը  
 Բարեկամ  
 Հավ չմնաց, վոր դուրս չգար

Ոգնության:  
 Բազեն տեսավ բանը բուրդ ե,  
 Ես անգամ՝  
 Թևին տվեց ու ազատեց  
 ինքնիրան.—  
 Թռավ, գնաց աչքը ենպես  
 վախեցած,  
 Վոր գնալիս՝ ել չնայեց  
 Դեպի ցած:  
 Են գնալն եր՝ գնաց, ընկավ  
 Սարեսար,  
 Են սարիցը անցավ դեպի  
 Մութ անտառ,  
 Ել վոչ մի որ գեղը չեկավ  
 Վորս անի  
 Ու պառավի թխսամորից  
 Զագ տանի:  
 Են որվանից թուխաը արձակ  
 Համարձակ  
 Ճուտերի հետ չափ-չփում եր  
 Կալ ու բակ.  
 Չափ-չփում եր, քջուշ անում  
 Աներկյուղ՝  
 Գիտեր, վոր ել բազեն չի գա  
 Իրանց զյուղ:

1914 թ.



ԾԸ — ԿԸ ՌՌՌ...

Հեմիաք

1.

Մեր աքլորը փահլան  
 Մի իգիթ եր վաղուցվան.  
 Զավթել եր մի ամբողջ գեղ,  
 Ման եր գալիս ամեն տեղ:  
 Մի որ թռավ կտուրը,  
 Դիտեց իրեն տան դուռը,  
 Հետո զլեց՝ յերկու գազ  
 Իր ծուղրուղուն անպակաս.  
 — Ծուղրու-ղու...  
 — Յես վարդերես Աքլորն եմ,  
 Կուրծքս կլոր արեգակ  
 — Յես զարդերես Բեգլարն եմ  
 Պոչս յեղջուր լուսնիակ.  
 — Ծուղրու-ղու...

— Թեկեր ունեմ խատուտիկ,  
Վոտներ ուժեղ ու ամուր,  
Խթան ունեմ՝ հաստ ու ձիգ,  
Կտուցս սուր՝  
Վոնց վոր թուր...  
— Ծուղրու-դու...  
Ու նա ենպես ծղրտաց՝  
Ամբողջ գեղը դղրդաց...

2

Համս ու ճուտը ցիրուցան՝  
Ես ձենը վոր իմացան՝  
— Վահ, վահ,—ասին,—ես ինչ ե՞,  
Աշխարհն իրենն ե կարծում.  
Շատ ե սխալ եղ հարցում:  
Համ ճշում ե,  
Համ կանչում,—  
Ասող չկա թե հերիք,  
Ել վոչ խան կա, վոչ մելիք...  
Յերկու պառավ  
Ալեսը հավ  
Ասին իրար.  
— Զլինի թե, քա խանում,  
Բազեն ճուտեր ե տանում,—  
Աքլորն յելել ե տանիք՝  
Փրկելու մեր ընտանիք.

— Կամ չլինի մեծ նանը  
Կուտ ե փոել դռանը,  
Հավաքում ե հավերին,  
Բոնոտում ե լավերին...

3

Հանկարծ կտրից  
Հոպլե — չոպ,  
Աքլորն արակ  
Թը-ը՛ո հոպ...  
Հենց ցած թուավ՝  
Կըչկըչաց, —  
Թափահարեց թևերը,  
Վոր նկատեն հավերը,  
Թե հայ-հարա,  
Տեսեք յես  
Կտրից թուա  
Ծտի պես...  
Թուավ իջավ  
Բակի մեջ,  
Ազատ արակ  
Յել և եջ,  
Թխսամերը  
Յետեկից՝  
Գնաց-յեկավ



Պոչը ցից...  
**Մեկ** ել եստեղ  
     նոր մեկանց  
**Զլեց** ուժեղ  
     Մի նոր կանչ.—  
 —**Ծնւղ-ընւ-դնւ...**  
 —**Մեզ** մոտ եսոր հանդես կա՝  
     կտցամարտ ե  
     Ճուտերի.  
**Հավախումբը** թող տես գա  
     ինձ մի նվեր  
     Թող բերի...  
 —**Ծնւղ-ընւ-դնւ...**  
**Ով** վոր չգա թամաշի

**Ծանը պատիժ**  
**Կըքաշի:**  
 —**Ծնւղ-ընւ-դնւ...**  
 4  
 կտցամարտի հրավերով  
 Բակը լցվեց հավերով.—  
 Չարաճճի ճուտերը՝  
 Պար են բռնել մոտները—  
 Մեկ վազում են, թոշկոտում,  
 Մեկ ել իրար բզկտում,  
 Իսկ աքլորը ինքնազո՞ն  
 Հանկարծ արավ կղոք-կռ-կռ.  
 —**Զեզ** եմ ասում, այ ձագեր,  
 Ինչ եք դես ու դեն ընկել...  
 Աքլորիկներ, մարիկներ,  
 Չալ ու չալտիկ վառիկներ,  
     Տեսնեմ ինչպես կկովեք,  
     Վոր ցուցակում կդրվեք:  
**Փետրիկը** թե՝  
     —Ա՛յ, եսպես,  
     Կորակտուց  
     Արծվի պես:  
**Շեկիկը** թե՝  
     —Ա՛յ, եսպես,  
     Ճանկերը սուր

Յինի պես:

Զագուկը թէ՝

— Այ, եսպես,

Են քաջ կովող

Վագրի պես:

Չուչիկը թէ՝

— Ճիշտ ենպես,

Ուրուների

Կովի պես:

Բեգլարը թէ՝

— Ապրեք, ապրեք, զորանաք,  
Խոսքերդ չըմոռանաք,

Դե, մի կովեք, տեսնեմ ձեզ,  
Ո՞վ ե կովում քաջի պես...

5

Ճուտիկները առաջ յեկան,  
Առաջ յեկան գազազած,  
Մեկ՝ մեկ-մեկու վրա ընկան,  
Մեկ՝ դիտեցին կզացած...

Փետրիկները ցից ցից արին,  
Գլուխները վար ու վեր,  
Կտուց-կտցի դեմք դրին,  
Կոփի տվին անվեհեր...

Իրար թուան ու թոչելիս՝  
Հարվածեցին ճանկերով,

Մեկ վար իջան ու իջնելիս՝

Պինդ զարկեցին թևքերով:

Առաջ բերին սուր-սուր խթան,

Հարվածեցին չարաչար,

Արնոտեցին քիթ ու բերան,

Յեկ թե միրուք, թե կատար:

6

Նանը տեսավ,

Տեսավ — ասավ.

— Ե՞ղջի Մանուշ, դեսը մտիկ,  
Ճուտիկները հալալվեցին...

— Ջու, ջու, ջու-ջու, յեկեք կուտ տամ,  
Կուտ տամ կերեք, զորացեք,

Ջու, ջու, ջու-ջու, յեկեք ջուր տամ,  
Ջուր խմեցեք, զովացեք:

Փետրիկն յելավ կտուրը,

Վիզը մեկնեց՝

— կիկ-լի-կի...

Շեկլիկն յեկավ տան դուռը՝

Գլուխը տնկեց՝

— կուկ-լու-կու...

Զագուկն ընկավ պարտեզը՝


Ենտեղ կանչեց

— կղի-կղի-կի...

Չուչիկն յելավ մեծ դեզը՝

Դեզից զոշեց

— Ծլ-կու-ու-ու...



Պառավները տնագ արին  
 Զուչիկ ճուտի կանչոցին,  
 Յելան ասին Մեծ Աքլորին,  
 Վոր անունը ջնջոտի:  
 Զանցավ յերկար ժամանակ,  
 Մեկ ել կազմվեց մի բանակ,  
 Ճուտիկները մեծացան՝  
 Քաջ Զուչիկի կողմն անցան:  
 Ու գզեցին Մեծ Բեգլարին՝  
 Միս չթողին լեն կատարին:  
 Ու նստեցին նրա թառին,  
 Գետնին թողին հին Աքլորին:  
 Գեղին դարձան տեր-տիրական,  
 Կյանք վարեցին ընկերական:

1925 թ.

## Ո Գ Ն Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ն

ԽԱՂ ՈՒ ՊԱՐ

Ի ՏԵՍՍՈՐԱՆ

Բեմը՝ լայն բակ ե, խորբում կա պարտեզ. բեմի մեջտեղ  
մի մեծ ծառ: Գալիս ե քուխան իր հաւտերով:

ԹՈՒԽԱԾԼ. Կարլաշխկ, կարլաշխկ...

ԱՇ ՃՈՒԹԻԿՆԵՐ,

ՅԵԿԵՔ ԳՆԱՆՔ արոտի,

ՔԴՈՒՋ արեք,

ԶԵԿ կուտ ճառեք—

ՈՎ կաշխատի, նա կուտի...

ՃՈՒՏԵՐ. (Դես ու դին վազելով):

—Ծիկ-ծիկ, ծիկ-ծիկ...

Ես ի՞նչ անթիվ

ԲԳԵՂՆԵՐ կան, մայրիկ ջան,

ի՞նչ անուշ են,

ՄԵՂՐ ու նուշ են,

Ի՞նչպես քաղցր կուլ կերթան...

ԹՈՒԽԱԾԼ. (Ծցուց անելով):

—Կարլաշխկ, կա-կա...

Այո, շատ կա,

Բայց չցրվեք, զգույշ կացեք,

Բազես կը գա,

Վրա կը տա,

Զեր չորս կողմը աչք ածեք...

ՃՈՒՏԵՐ. ԶԵ-ՀԵ, ծիկ-ծիկ...

Մենք հավի ճիվ,  
 Զենք հեռանա, մայրիկ ջան,  
 Վհոց թե, ծիվ-ծիվ...  
 Յաք ու ցրիվ,  
 Մեղ հերիք ե մեր շրջան...

(Թուխսն իր նուտերի հետ գնում են դեպի պարտեզ ու  
հեռանում են. ծառի տակ մնում ե սի նուտիկ...):

ՃՈՒՏԸ (Խրեն վատ զգալով):

—Ծիվ-ծիվ, ծիվ-ծիվ...  
 Ախ յես հսկիվ,  
 Հազիվ-ապ եմ քայլ փոխում,  
 Սիրտս խառնում,  
 Վատ եմ դառնում,  
 Զեռս ու վոտս են դողդողում:

Ախ հւը ես, եղ հւը...  
 Ուր ես, մայրիկ ջան,  
 Ինչու չեմ լսում ձայնդ կըշկըշան:

ԿԱՏՈՒ. (Պատի տակից առաջ ե զալիս):

—Մյան... մյան... այ քեզ բախտ,  
 Տես ի՞նչ գտա եսպես վախտ,  
 Համի ճռւտի  
 Մարդ վհոց չուտի,  
 Ենպես խժուեմ  
 Վոսկոը փշրեմ,  
 Բայց վհնդ պրծնեմ շան ձեռից,  
 Տես ինչպես ե նայում ինձ...

ՃՈՒՏԻԿ. (Դողալով):

Ախ... ոգնեցեք,  
 Վախ... ոգնեցեք,  
 Խաբառ տարեք մայրիկիս,  
 Չար կատուն ե քամակիս...

ԶԱՄԲԱՐ ՇՈՒՆԸ. (Առաջ ե զալիս դրան մոտից):

—Այ իմ պստիկ  
 Սիրուն ճուտիկ,  
 Մի վախի դու, դոչաղ կաց,  
 Ծես չեմ թողնի,  
 Կատվին մոտիկ,  
 Կը գլոգղեմ յես ձեռաց...  
 (Զամբարը կատվին):  
 —Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ...

Այ չար պառավ,—  
 Ի՞նչ ես ուզում մեր ճուտից...

## ]] ՏԵՍԱՐԱՆ

ԲԵՄՔ նույն բակն ե պարտեզով, բակի մեցտեղ մի մեծ  
ծառ, ծառի տակ՝ հիվանդ նուտիկը:

ԹՈՒԽՆԸ. (Զայնը զալիս ե հեռվից):

—Կարախիկ, կարախիկ...  
 Այ իմ ճուտեր,  
 Շամտ-շամտ մորեխ,  
 Շամտ-շամտ մժեղ  
 Պետք չե ուտել,  
 Վնաս կտա...

ՃՈՒՏԻԿ. (Ծառի տակից):

—Վայ յես... ծիվ-ծիվ...  
 Ենքան անթիվ  
 Մորեխ կերա  
 Հիվանդացա,  
 Կծիկ դարձա,  
 Յեկ ոգնիր ինձ, մայրիկ ջան...

ԿԱՏՈՒ (Պատի տակից մոտ ե վազում):

—Մյան-մյան...  
 Եես ունեմ զեղ,  
 Կը բժշկեմ խկույն քեզ...

**ԶԱՄԲԱՐՁ.** (Առաջ զալով):

—Հաֆ-հաֆ... հաֆ-հաֆ...

Յես հենց եստեղ

Ուզած մահդ կտամ քեզ...

(Կատուն յերկուդից յես ե բաւում. ունը պառկում  
նուժից վոչ հեռու)։

**ՄԻ ԱՔԼՈՒԻԴԿ.** (Պարտեզի խորհից առաջ զալով):

—Կիկ-լիկին...

Եստեղ ինչօան

Մորեխներ կան...

Կիկ-լիկին...

Մերոնք թող գան

Սրանց վերջ տան...

**ՃՈՒՏԻԿ.** (Այլարիկին):

—Ծիգ-ծիգ այ ախաղերիկ,

Ծիգ-ծիգ, մեկ ինձ մտիկ...

**ԱՔԼՈՐԻԿ.** (Մոտենում ե նուժիկին ու զարմանում):

—Կիկիկին...

Ես ում եմ տեսնում...

Ես ի՞նչ եմ լսում...

**ՃՈՒՏԻԿ.** Կասչիր թող գա մայրիկու:

**ԱՔԼՈՐԻԿ.** — Կիկ իկին.. այ թխսամեր...

Կիկիկին.. այ ճուտիկներ...

Յեկեր, յեկեր...

Իեսը յեկեր...

Յես զտել եմ մեր քուրիկին,

Յես զտել եմ ճուտ-մարիկին:

(Թխսաւեն իր ձագերով առաջ ե զալիս):

**ԹՈՒԽԱԼ.** — Ո՞ւր ե, ուր ե ճուտ-մարին,

Մի հարցուեք աքորին...

Մոլորդել ե խեղճ ճուտը,

Քթիցն ելափ վողջ կուտը...

**Ա.ՔԼՈՐԻԿ.** — Այ եստեղ ե ճուտ-մարին,

Ապալինած Զամբարին...

(Բժուր զալիս են ծառի տակ շշապատում  
նիվանդ նուժիկին):

**ԹՈՒԽԱԼ.** — Բարնվ, բարնվ,

Ճուտիկ ջան...

**ԶԱԳԵՐԸ.** — Բարնվ, բարնվ,

Քուրիկ ջան...

Ո՞ւր գնացիր յետ չեկոր,

Եդ ի՞նչ որի դու ընկար...

**ՃՈՒՏԻԿ.** — Ծիգ-ծիգ...

Ախ, ես չար կատուն...

Այ, քեզ բարի շուն...

Կատուն ուզեց ինձ տանի,

Շունը հասավ նրա ջանին...

(Ես միջոցին բեմի նետեվից լսում ե ըների հաջոց):

Հաֆ-հաֆ... գողցան,

Անցան...

Հաֆ-հաֆ... տարան

Կորան...

**ԶԱՄԲԱՐՁ.** — (Ներսից դուրս վագելով):

— Հաֆ-հաֆ... յեկա

Յեկա... յեկա...

**ԿՈ.ՏՈՒՆ.** — (Ազտիելով շան բացակայությունից՝  
հարձակվում ե նուժիկի վրա):

— Մյանւ... մյանւ...

Են ի՞նչ ասիր դուն...

Յես եմ չար կատուն...

**ՃՈՒՏԻԿ.** — (Վախեցած մի կողմ ե փախչում):

— Ծիգ-ծիգ, ախ ինձ ոգնեցեք...

Ծիգ ծիգ, կյանքս փրկեցեք...

ԹՈՒԽԸՆ. — (Առաջ և զալիս ու կոփի բռնվուս  
կատվի նես):

Կատու, հեռու,  
Տուր կը տամ,

Աչքիդ լուսը  
Փուլ կտամ...

ԿԱՏՈՒՆ. — ԱՇ թուխս փախի,  
Կը զգեմ,

Վողջ արյունդ  
Կը մըզեմ...

ԹՈՒԽԸՆ. — Կատու, ճանկդ  
Քեզ քաշի,

Իզուր սիրադ  
Մի մաշի...

ԿԱՏՈՒՆ. — Խրատ ունես  
Քեզ ասա,  
Թե չե՞ ես ե  
Քեզ հասա...

ԹՈՒԽԸՆ. — Կատու, կորի,  
Դու ով ես,  
Մի ցատկոտի  
Գմի պես...

ԿԱՏՈՒՆ. — Մի տես, մի տես,  
Սրան տես,  
Յես քեզ կանեմ  
Յերկու կես...

ԶԱՄԲԱՐ. — (Վերաբանում ե դրսից ու ոզնության  
հասնում բխաւմոք):

Հաֆ-համֆ... ախ դու,  
ԱՇ չար կատու...  
(Կծում ե կատվի վոտից):

ԿԱՏՈՒՆ. — Մյանւ... մյանւ...

Ախ մեռնում եմ,

Վախ մեռնում եմ...

ԶԱՄԲԱՐ. — Հաֆ-համֆ... հաֆ-համֆ...

Ինչ կը բրդես,

Են կը խրդես...

ՃՈՒԽԿ. — Շնորհակալ եմ Զամբարից,

Վոր չար կատվից փրկեց ինձ...

ԲՈԼՈՐ. — Կեցցե՛, կեցցե՛ Զամբարը,

Խորտակում ե միշտ չալը...

Նա յե ամեն մի բանում

Մեր բակվորին պաշտպանում:

ԿԱՏՈՒՆ. — (Մոտենաւմ, ձեռքով բռնում ե բուկը  
յեզ խնդրում ե):

— Մյանւ... մյանւ...

Ախ, յես մեղա... ներեցեք ինձ,  
Զեմ հեռանա յես ձեզնից...

ԹՈՒԽԸՆ. — Մենք... մենք...

Ներում ենք...

Ու միասին

Պարում ենք...

ԲՈԼՈՐ. — Պար-պար, պար-յայլի...

Յեկեք պարենք հավ յայլի...

Թե ծափ տփող շատ կրլի՝

Դուրս կը թռչենք շեալի...

Մեր լավ պարող նանի պես,

Են քաջ կովող ցինի պես...

Պար-պար...

Պար-յայլի,—

Պար ենք զալի հավ-յայլի...

Վ. Ա. Ր. Ա. Ռ. Յ. Յ. Յ. Յ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իմ բախկը . . . . .	9
Հոկտեմբերիկին . . . . .	10
Հոկտեմբերյան ձռն . . . . .	11
Հեշում և զանգը . . . . .	13
Ծովի պես . . . . .	15
Իմ ծաղիկները . . . . .	16
Շուշաններ . . . . .	18
Պապար . . . . .	20
Ծիտիկն ու Սուրբիկը . . . . .	21
Ալիկ . . . . .	23
Կատու . . . . .	25
Իմ փիսիկը . . . . .	27
Պստիկ տղան . . . . .	28
Ժամացույց . . . . .	29
Ջնծաղիկ . . . . .	30
Ջնն, այ լուսին . . . . .	31
Եերգ գարնան . . . . .	33
Ջրվեժ . . . . .	34
* * *	36
Ամրան որերին . . . . .	37
Ծիրանի շերեփը . . . . .	40
Պախախոտ . . . . .	43
Մայիս . . . . .	50
Չեվ, չեվ ծաերը . . . . .	61
Թուխոր . . . . .	73
Ծը-կըռոռ . . . . .	85
Ազնություն . . . . .	93

Տես. Խօսքագիր՝ Աս. Քասուրյան  
Սըբագրիչ՝ Ա. Դայտոն

Գյավավիտի լիազոր՝ Ա.-4095. Հրատ. № 4740.

Պատգեր 753. Տիրած 2500

Հանձնված և արտադրության 29 հոկտեմբերի. 1938 թ.

Ստորագրված և ապագրության համար 26 նոյեմբերի. 1938 թ.

Գետերատի 1 ապարան, Յերեան, Լենինի, 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0399128

ԳԻՒԸ Յ Ա Բ Ե Կ

6387

0916759

Ա. Ա Գ Ա Բ  
ДЕТСКИЕ ПЕСНИ  
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН